Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
փետրվարի 16-ի N 164 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՆԴՇԱՖՏԻ ՄՐՑԱՆԱԿ ՇՆՈՐՀԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակի շնորհման կանոններն ու չափանիշները, ինչպես նաև մրցույթի մասնակցության ու անցկացման պայմանները:

2. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակը պատվավոր պարգևատրում է, որը շնորհվում է Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ կոնվենցիա) իրագործման շրջանակներում արդյունավետ և տեսանելի արդյունք ունեցող գործունեության համար:

3. Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակը կազմում է Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված լանդշաֆտի մրցանակ շնորհելու գործընթացի մասը: Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակով (այսուհետ՝ մրցանակ) պարգևատրվածները կարող են ներկայացվել Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի մրցանակի հավակնություն ունեցող թեկնածությունների թվում:

4. Մրցանակի նպատակը լանդշաֆտային օրինակելի գործողությունների կիրառման նախաձեռնությունները պարգևատրելն է՝ մարդու կենսապայմանների բարելավմանն ուղղված՝ կոնվենցիայով սահմանված նպատակներին հասնելու համար:

5. Մրցանակով պարգևատրվում են լանդշաֆտի պահպանության, կառավարման և (կամ) պլանավորման գործում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ թեկնածու) կողմից իրականացված նշանակալի ներդրումները, ավարտված միջոցառումները կամ ծրագրերը (այսուհետ՝ ծրագիր):

6. Մրցանակն ունի դիպլոմի և արձանիկի տեսք: Կարող են շնորհվել նաև հատուկ շնորհակալագրեր՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N 650-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից սահմանված անվանակարգերով:

7. Մրցանակի շնորհման արարողակարգը բաց է և հրապարակային՝ դրանով իսկ նպաստելով լանդշաֆտի արժեքների կարևորության, անհատների և հասարակության բարեկեցությանը դրանց նպատակառուղղվածության մասին մարդկանց իրազեկվածության բարձրացմանը: Մրցանակի շնորհման գործընթացը նպաստում է նաև լանդշաֆտի քաղաքականությունների վերաբերյալ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության խթանմանը:

II. ՄՐՑԱՆԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

8. Թեկնածուների կողմից ներկայացվող ավարտված ծրագրերը պետք է համապատասխանեն սույն կարգի 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով սահմանված չափանիշներին:

9. Տարածքային կայուն զարգացում (1-ին չափանիշ)՝

1) ծրագրերը պետք է ներկայացնեն լանդշաֆտների պահպանման, կառավարման և (կամ) պլանավորման ակնառու արդյունք.

2) ծրագրերը պետք է լինեն ավարտված և մինչև մրցանակի ներկայացվելը պետք է ճանաչված լինեն հանրության կողմից առնվազն 3 տարի, ինչպես նաև՝

ա. համահուչ լինեն կայուն տարածական զարգացման քաղաքականության սկզբունք-ներին,

բ. ցուցադրեն շրջակա միջավայրի, տարածքային, սոցիալ-տնտեսական, մշակութային ու գեղագիտական կայունությունը,

գ. բարելավեն և հարստացնեն լանդշաֆտը, ինչպես նաև նպաստեն լանդշաֆտի հեռանկարային զարգացմանը,

դ. նպաստեն լանդշաֆտներին սպառնացող վտանգների կանխարգելմանը:

10. Օրինակելի արժեք (2-րդ չափանիշ)՝

1) քաղաքականությունը և միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված կլինեն լանդշաֆտների պահպանության, կառավարման և (կամ) պլանավորման կատարելա-գործմանը, պետք է ներկայանան որպես լավագույն փորձի օրինակներ՝ այլ շահառուների համար.

2) ծրագրերը պետք է հստակ արտացոլեն լանդշաֆտի որակի նպատակները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 45 արձանա-գրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթներին համապատասխան:

11. Հասարակության մասնակցություն և իրազեկվածության բարձրացում (3-րդ չափանիշ)՝

1) ծրագրերը պետք է համակողմանի քննարկված լինեն հասարակության, տեղական և տարածքային իշխանությունների և այլ շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ.

2) հասարակության մասնակցությունը պետք է ապահովվի ազգային, տարածքային կամ տեղական իշխանությունների կողմից իրականացվող՝ երկխոսության և կարծիքների

փոխանակման ընթացակարգերի միջոցով (օրինակ՝ հասարակական քննարկումներ, բանավեճեր, խորհրդակցությունների կազմակերպում և այլն).

3) ծրագիրը պետք է պարունակի լանդշաֆտների արժեքի, դրանց դերի և փոփոխության վերաբերյալ քաղաքացիական հասարակության իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործողություններ, որոնք իրականացվել են ներկայացվող ծրագրի շրջանակներում:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12. Մրցույթի մասնակից (թեկնածու) կարող են լինել սույն կարգի 5-րդ կետով նշված մարմինները և կազմակերպությունները, որոնց կողմից իրականացված ծրագրերն ապացուցել են իրենց շարունակական արդյունավետությունը և նշանակալի ներդրում են ունեցել լանդշաֆտի պահպանության, կառավարման կամ պլանավորման բնագավառում:

13. Տեղական և տարածքային իշխանությունների խմբավորումները ևս կարող են թեկնածուներ լինել՝ պայմանով, որ միասին են կառավարում ծրագրով ներառված լանդշաֆտը:

14. Յուրաքանչյուր թեկնածու ներկայացնում է հայերենով հայտ, որը պետք է պարունակի՝

1) թեկնածուի տվյալները (ոչ ավելի, քան 3 էջ).

2) լանդշաֆտի պահպանության, կառավարման և (կամ) պլանավորման համար իրականացված և ավարտված ծրագրի նկարագիրը, որով ապացուցվել է վերջինիս շարունակական արդյունավետությունը և որը կարող է օրինակ ծառայել այլ տարածաշրջանների, համայնքների և (կամ) կազմակերպությունների համար.

3) ծրագրի նկարագիրը պետք է ներկայացվի թղթային տարբերակով (ոչ ավելի, քան 20 էջ) և էլեկտրոնային կրիչով (*PDF ձևաչափի ֆայլերով), ինչպես նաև ցուցադրական պաստառների տեսքով: Ներկայացվող փաթեթում կարող է ներառված լինել նաև տեսաֆիլմ՝ 5 րոպեն չգերազանցող տևողությամբ.

4) ներկայացվող ցուցադրական նյութերը (գծագրեր, լուսանկարներ, ակնարկներ և այլն) չեն կարող ծանրաբեռնված լինեն հեղինակային իրավունքով:

15. Սույն կարգով սահմանված չափանիշներին չհամապատասխանող հայտերը մրցութային հանձնաժողովի կողմից չեն քննարկվում:

16. Մրցույթն անցկացվում է յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ: Թեկնածուների հայտերը պետք է ներկայացվեն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն մինչև զույգ տարեթվերի սեպտեմբերի 1-ը՝ վերջինիս կողմից առնվազն երեք ամիս առաջ տրված հայտարարության հիման վրա:

IV. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

17. Մրցութային հանձնաժողովի և դրա նախագահի գործառույթները վերապահվում են համապատասխանաբար սույն կարգի 6-րդ կետով նշված միջգերատեսչական հանձնաժողովին և դրա նախագահին:

18. Մրցութային հանձնաժողովը որոշում է ընդունում մրցանակի և (կամ) հատուկ շնորհակալագրի շնորհման մասին՝ մինչև սույն կարգի 16-րդ կետում նշված տարվա հոկտեմբերի 1-ը:

19. Ընտրությունը կատարվում է քվեարկությանը մասնակցող անդամների առնվազն 2/3–ը կողմ քվեարկելու դեպքում:

20. Մրցանակը թեկնածուների կազմից ընտրված հաղթողին է հանձնվում սույն կարգի 18-րդ կետում նշված ժամկետից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

21. Մրցութային հանձնաժողովի կողմից հաղթողի ընտրությունը պատշաճ կերպով հիմնավորվում և արձանագրվում է:

22. Մրցութային հանձնաժողովը կարող է առաջարկել առանձնացնել հատուկ շնորհակալագիր (շնորհակալագրեր)՝ սույն կարգի 6-րդ կետով նշված անվանակարգերով:

23. Մրցութային հանձնաժողովը հաղթողին ընտրելուց հետո ընդունում է որոշում՝ Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի մրցանակաբաշխությանը Հայաստանի կողմից հայտ ներկայացվելու վերաբերյալ: Այդ դեպքում թեկնածուն 14-րդ կետով նշված նյութերը ներկայացնում է անգլերենով կամ ֆրանսերենով՝ Եվրոպայի խորհուրդ ներկայացնելու նպատակով:

V. ՄՐՑԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

24. Մրցութային հանձնաժողովի քվեարկության արդյունքներով ընտրված հաղթողին, ինչպես նաև հատուկ շնորհակալագրերի արժանացած թեկնածուներին մրցանակը և հատուկ շնորհակալագրերը հանձնում է հանձնաժողովի նախագահը:

25. Մրցանակի և հատուկ շնորհակալագրերի արժանացած ծրագրերը, ինչպես նաև դրանց ընտրության հիմնավորումները ներկայացվում են հանձնաժողովի նախագահի կողմից՝ մրցանակի հանձնման հրապարակային արարողության ժամանակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ